Հայցվորի կողմից վճարվել է պետական տուրքի գումարը։

Հայցը բավարարման ենթակա լինելու պարագայում պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նաև պետական տուրքի գումարը՝ 100000 ՀՀ դրամի չափով։

Այլ դատական ծախսերի միջնորդություններ չեն ներկայացվել։

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12. և 362-րդ հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Մոսէսքո» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության՝ վերջինիս կարիքների համար ավտոտրանսպորտային միջոցներին անհրաժեշտ յուղերի, քսայուղերի, զտիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնումների հանձնաժողովի 02.05.24թ. «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, բավարարել՝ ճանաչել անվավեր ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնումների հանձնաժողովի 02.05.24թ. «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը։

2. «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունից հօգուտ «Մոսէսքո» ՍՊ ընկերության բռնագանձել 100000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար։

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում։

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am